



ՀՐԱՆՏ ՀՐԱՀԱՆ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԵՐԳՉՈՒՀԻՆ

Ինչ արդամյան պողոտայի սկիզբը, դեմ առ դեմ կանգնած են երկու բալմահարկ բնակելի շենքեր, որոնք դեռ նոր կառուցված վարդապետյն տուֆ քարից, նման են ծաղկաստանի մուտքին իրենց բուլանդակ շքեղությամբ բացված երկու հսկա վարդերի, ու ժպտում են Հայրենիքի արևին ու երկընթին:

Աշնանային մի արևոտ օր, ես բարձրանում եմ այդ վարդապետյն գեղեցիկ շենքերից աջակողմյանի մարմարե սանդղեքներով և ուրախության հուզմունքներով կանգ եմ առնում մի բնակարանի առաջ, ուր ապրում է տաղանդավոր երգիչ-արտիստուհի հայրենադարձ Գոհար Գասպարյանը:

Ո՞ւմ ծանոթ չէ նրա անունը:

Նա հրգում է Հայկական ՍՍՌ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան պետական օպերայում որպես մենակատար դերասանուհի, համերգներ է տալիս Հայկական ֆիլհարմոնիայում, հաճախ երգում է ռադիոյից և Նրեվան հանդիսավոր նիստերում: Ծրկու տարի բավական եղավ դրսևորելու նրա ձայնական հմայիչ շնորհը: Եվ այժմ նրա համբավը տարածվել է Սովետական Հայաստանում և րնդհանուր Սովետական Միության մեջ: Նրան ճանաչում են բոլորը՝ հասարակ բանվորներից սկսած մինչև ռեսպուբլիկայի ղեկավարները, բազմահազար ուսանողներն ու աշակերտները, գիտություն ու գրականության աշխատողները, արվեստի ներկայացուցիչները, արհեստավորները, պետական պաշտոնյաները, բոլորը, բոլորը: Նա բոլորին սիրելին է, մանավանդ իր անսահման համեստությունով:

Այսօր ես պետք է ծանոթանամ նրա հետ: Թո՛ղ ծանոթանան նրան նաև Սփյուռքի հայրենակարոտ մեր եղբայրները և իմանան, թե իրկու տարվա ժամանակաշրջանում Սովե-

տական Հայրենիքը ի՞նչ պատվարեր բարձրության ու նախանձելի կատարելության հասցրեց հայրենադարձ երգչուհու արվեստագիտական ընդունակություններն ու բնատուր հատկությունը, և ինչքա՛ն բարձր է գնահատում ու քաջալերում առհասարակ տաղանդավոր արժեքներին:

Եվ ահա՛, սովետական շնորհալի արտիստուհին և նրա լեզվագետ մտավորական ամուսինը՝ Հայկ Գասպարյանը, իրենց սովորական անկեղծ ժպիտով և բարյացակամ տրամադրությամբ դիմավորում են ինձ:

Ամեն առիթով ես լսել էի շնորհալի երգչուհի Գոհար Գասպարյանի սոխականման ձայնը: Բայց այսօր ես լսում եմ նրա խոսքը, նրա կյանքի պատմությունը, որ պարզ է, խաղաղ ու հանդարտ:

Նա դեռ շատ երիտասարդ է, քսանյոթ տարեկան, իսկական հայուհի, սեաշյա և սեահոնք, ու միշտ ժպտում: Նա ծնվել է Եգիպտոսի մայրաքաղաքում՝ Կահիրեում 1924 թվին: Միակ զավակն է բարեկեցիկ իր ծնողներին, որոնք Թյուրքիայից են գաղթած դեպի փարավոնների երկիրը, ու մինչև այսօր մնում են այնտեղ, անհամբեր սպասելով Հայրենիք ներգաղթելու երջանիկ օրվան:

Փոքրիկ Գոհարիկը իր նախնական կրթությունն ստանում է Կահիրեի հայոց «Գալստյան»-ի անվան ազգային դպրոցում և դեռևս ինը տարեկան հասակում սկսում է սոլոներ երգել հայոց եկեղեցում: Նախնական հայնցի կրթությունն ստանալուց հետո, նա հաճախում է Կահիրեի ֆրանսիական կոնսերվատորիայի (բարձրագույն միջնակարգ դպրոց) և ավարտում է այն բարձր գնահատականներով: Ուսանողության այս տարիներին է, որ նա ծանոթանում է մի շարք երաժշտագետ պրոֆեսորների հետ, ուսումնասիրում է երաժշտության տեխնիկան և թեորիան և մշակում իր ձայնը: Ապա նա երեք տարի սովորում է

օպերային արվեստի տեխնիկան և համերգային ծրագրերը:

Գոհար Գասպարյանը նդիպտոսում եղած ժամանակ ծանոթանում է միջազգային կլասիկ կոմպոզիտորների ստեղծագործություններին և համդիսավոր տոներին ու բարեսիրական ձեռնարկների առթիվ երգում է հայ և օտար շրջանների մեջ: Նա Կահիրեում տալիս է և առանձին համերգներ:

— Բայց, — ասում է հայրենասեր հայուհին, — այս բոլորն ինձ բավականություն չէին տալիս: Ես խանդավառված էի իմ Սոսիտական Հայրենիքով: Հեռվից ես հետևում էի իմ Հայրենիքի գեղարվեստական կյանքին և կոպտության վերելքին, և ուզում էի ես էլ խառնվել սովետական մեր կառուցողների և ստեղծագործողների մեծ բանակին: Այդ ցանկությունն իմ մշտապես երազն էր: Ես հավատացած էի, որ Հայրենիքը հնարավորություն կտա իմ ընդունակությունները զարգացնելու իր արվեստի վարպետների շունչով:

Ու մշտական ժպիտն իր շրթներին, շարունակում է նա ուրախ:

— Արդեն տեսնում եք, որ ես հասել եմ իմ գլխավոր նպատակին: Իմ երազն իրականացել է: Երեք տարի է ինչ ես իմ հարգատ Հայրենիքում եմ, իմ նախահայրերի երկրում, որի հրաշալի հեթաթնեքով էին ինձ մեծացրել իմ ծնողները: Ես այժմ վայելում եմ նրա գուրգուրանքը և անմահական օդն ու ջուրը: Ես երախտապարտ եմ հայ արվեստի ղեկավարների ջանքերին, և, հատկապես, օպերայի գլխավոր դիրիժոր Մ. Թավրիզյանի եղբայրական ազնիվ օժանդակության, որի շնորհիվ ես սկսեցի առաջանալ և ավելի ու ավելի խորանալ օպերային բազմապահանջ արվեստի նրբություններին մեջ: Ես տվեցի և տալիս եմ սիմֆոնիկ ու կամերային համերգներ և երգում եմ առավելապես կոլորատուր սոպրանոյի իմ ժանրը պարունակող ստեղծագործություններ համաշխարհային կլասիկներից: Բայց կարող եմ ասել, որ ես Հայրենիքում իմ ստեղծագործական ուղին գտա «Լակմե»-ով և «Անուշ»-ով: Առաջինն ինձ հնարավորություն տվեց մտնել բուն իսկ իմ ձայնի առանձնահատուկ կոչումի մեջ: Երկրորդն իմ առաջ բացեց հայ ժողովրդի թանկագին գանձերը, նրա ուրախության և վշտի զգացմունքներն ու հուզմունքների հարազատ լարերը: «Անուշ»ի զմայլելի արիանների մեջ ես իմ բովանդակ ձայնի սիրտն եմ դնում: Ես նրա մեջ զգացի սովետահայ կոմպոզիտորների ստեղծագործական մեծ ուժը: Ու հայ երգն ինձ հրապուրում է:

— Ես ինձ լրիվ քնահատված եմ զգում, — վերջացնում է նա ուրախ ու խրջանիկ: — Պետությունը ջանք չի խնայում՝ ամեն տեսակ հնարավորություններ ստեղծելով ինձ համար: Ահա այսպիսի ղեկեղծիկ ու ընդարձակ բնակարան է հատկացրել ինձ: Ու ես միշտ պարտական եմ զգում. ես պետք է աշխատեմ ու ձգտեմ միշտ ղեկի ալելի բարձր, գեղեցիկն ու կատարյալը:

Արդարև, ընդարձակ է ու գեղեցիկ նրան հատկացված նորակառույց բնակարանը և օժտված է բոլոր արդիական հարմարություններով:

Ուզում եմ մի քանի հարցումներ ուղղել, բայց նա կարծես արդեն գուշակում է և նորից սկսում խոսել, նույն հանդարտ ու խաղաղ տոնով:

— 1950 թվի ամռանը, ես առիթ ունեցա Սոչիում երգելու ռուս հասարակության առաջ, և այնտեղ ծանոթանալու ռուս հռչակավոր կոլորատուր երգչուհի Բարսովայի հետ, որի ինձ հանդեպ ցույց տված ջերմ ու սրտառուչ վերաբերմունքը, օժանդակությունն ու հովանավորությունը երբեք չեմ կարող մոռանալ: Նրա նախաձեռնությամբ ես Սոչիում տվեցի յոթը համերգ, որոնցից երկուսը համամիութենական սիմֆոնիկ նվագախմբի հետ, երեքը՝ փոքրակազմ նվագախմբի հետ, մեկը՝ կամերային: Բոլոր համերգներին էլ ինձ ունկնդրող հասարակությունն ընդունեց ամենաջերմ ու սրտաբուխ համակրանքով, որի համար ես ուղղակի եջախտապարտ եմ զգում:

— Չե՞ք մտածում գաստրոլներ ունենալ սովետական մյուս ռեսպուբլիկաներում:

— Արդեն հրավերներ ստացել եմ Լենինգրադից, Տալլինից, Ռիգայից, Վիլնայից, Մինսկից, Կիևից ու այլ քաղաքներից և հույս ունեմ, որ ինձ կհաջողվի մոտ ժամանակից դեռ ալ քաղաքները:

— Ի՞նչ նոր դերերի մեջ պետք է խրվեք սրանից հետո:

— Շատ հավական է, որ Մոսկվայում տեղի ունենալիք տասնօրյակում երգեմ Զուհայանի «Արշակ երկրորդի» մեջ Օլիմպիադայի դերում, ինչպես նաև «Կարինե» դավաշտական օպերայի մեջ Կարինեի դերում ու «Հերոսուհի»ի մեջ Գոհարի դերում: Այս վերջինը թեև փոքր է, բայց պատասխանատու:

— Ռուսերեն երգում եք, բայց սովորո՞ւմ եք նաև ռուսաց լեզու:

— Իհարկե: Ռուսաց լեզուն ո՛չ միայն իմ առօրյայի հետ կապված անհրաժեշտ լեզու:

է, այլև՝ գեղեցիկ է ու քաղցրահամը, որը ես շատ եմ սիրում: Արդեն հատուկ ուսուցիչ եմ վարձել, որը հույս ունի թե ես շուտով կտիրապետեմ ռուսերենին:

— Ձեր ձայնին հատուկ երգեր ձայնագրո՞ւմ են սովետահայ կոմպոզիտորները:

— Արդեն սկսել են գրել ու մի քանի հատն էլ երգել եմ:

— Սլավոն կլասիկներին սիրո՞ւմ եք:

— Բոլոր սրտովս: Առանձնապես ինձ սիրելի են Չայկովսկին, Կորսակովն ու Շոպենը: Իսկ սովետական երաժշտությունն ու հատկապես օպերան ինձ շատ է դուր գալիս:

Վերջին խոսքերի վրա, տաղանդավոր երգչուհու ամուսինը գրկած բերում է իրենց փոքրիկ երեխային և ասում է ուրախ տոնով.

— Սա՛ էլ է հայ ժողովրդի դուստրը, իմ փոքրիկ Սեդան:

Երեխան ժպտում է անմեղորեն, և փոքրիկ վարանումից հետո թաթիկն ինձ է երկարում: Հայրենասեր երգչուհին դառնալով նրան՝

— Սեդա ջա՛ն, — ասում է, — կարո՞ղ ես երգել հորեղբոր համար:

— Ամաչում եմ, — թոթովում է երեխան անկեղծ պարզությամբ:

— Ամաչելու ոչինչ չկա: Հորեղբայրը շատ է սիրում երեխաների երգերը, դե՛, երգի՛ր, րալիկ ջա՛ն:

Փոքրիկ Սեդան, քաջալերված, սկսում է մեղմորեն երգել իր մամայի սիրած արիան.

«Ասում են, ուտին աղջիկ էր ինձ պես...»:

Բառերն ու եղանակը խառնվում են իրար

երեխայի անմեղ շրթների վրա: Ծափահարում ենք ու ծիծաղում:

— Դե՛, հիմի էլ պետք է նվագե՛ս, — ասում է երգչուհին իր երեխային, որ այլևս ընտելացած օտարի ներկայությամբ, վստահ քայլերով գնում է դեպի դաշնամուրը: Հայրը նրան բարձրացնում է աթոռակի վրա, և նա շուրջ մատիկները տեղավորելով ստեղնաշարի վրա, սկսում է նվագել:

Ես զարմանում եմ, որովհետև փոքրիկն իսկապես նվագում է մի սրտառուչ եղանակ, կարճ, ընդհատ, քայքայ սիրուն և հասկանալի: Վերջացնելով, դեպի ինձ շուռ ք տալիս իր սեահեր փոքրիկ գլխիկը և նայում հարցական. արդյո՞ք կզնահատեմ իր արվեստը: Ես հիացմունքով եմ ծափահարում և հարց տալիս նրա ծնողներին.

— Ի՞նչ երգ էր այս, ևս առաջին անգամն եմ լսում:

— Խաղաղության երգն է այս, — ասում է ուրախ հուզմունքով երեխայի մայրը՝ Հայրենիքի նոր սոխակը, որ ավելացնում է հարաճուն հուզմունքով.

— Ես ուզում եմ խաղաղության եղանակով վարժեցնել իմ երեխայի առաջին քայլերը: Իմ գլխավոր ցանկությունն է երգել մարդկանց ստեղծագործ աշխատանքը, նրանց երջանիկ ու խաղաղ կյանքը, ուրախության հուզմունքները, մարդկային երջանկության ծառայող նրանց նվաճումները:

Կարճ ժամանակամիջոցում, երգչուհի Գոհար Գասպարյանը, իր հարաճուն հաջողություններով, արժանացել է 1950 թվի Ստալինյան մրցանակի լատերետի բարձր կոչմանը:

